ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0836-Ա

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, Փամբակ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել 2025 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-6 հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

12 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0837-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷՄՄԱ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԱՐՓԻԿ ԳՅՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԷՄՄԱ ԱՐՄԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 9-րդ հոդվածի 1-ին կետով, 20-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածով, 51-րդ հոդվածի 1-ին մասով, 52-րդ հոդվածով, 53-րդ հոդվածի 1-ին մասով, 58-րդ, 109-րդ հոդվածներով, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 2 հունիսի 2016 թվականի 631-Ն որոշմամբ, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, հիմք ընդունելով Փամբակ համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 12 օգոստոսի 2025 թվականի թիվ 8 նիստի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Անչափահաս Էմմա Արմենի Սարգսյանին /ծնված՝ 04.12.2008թ., անձնագիր՝ AO 0257986, տրված՝ 23.06.2025թ., 033-ի կողմից/ ճանաչել որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա և վերցնել սկզբնական հաշվառման:

2. Արփիկ Գյորգնի Պետրոսյանին /ծնված՝ 27.02.2053թ., անձնագիր՝ AX 0342264, տրված՝ 04.07.2024թ., 033-ի կողմից/ նշանակել անչափահաս Էմմա Արմենի Սարգսյանի նկատմամբ հոգաբարձու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

12 օգոստոսի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0838-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Համեստ Լևոնի Խառատյանի (ծնված 17 . 08 . 1945թ) դիմումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը, 2025F4KNWW մուտքագրման տեղեկանքը, գույքի նկատմամբ կազմված տեխնիկական անձնագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ, 13-րդ փողոց, 4-րդ փակուղի 1 բնակելի տուն հասցեում գտնվող 06-070-0094-0014 կադաստրային ծածկագրով 0,10661 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շենք շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Համեստ Լևոնի Խառատյանի սեփականության իրավունքը 06-070-0094-0014 կադաստրային ծածկագրով 0,10661 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա՝ մինչև 2001թ-ը կառուցված 130,7 ք/մ մակերեսով շենք շինությունների նկատմամբ:

3. Հողամասի վրա առկա է 2001թ-ից ինքնակամ կառուցված՝ ընդհանուր 5,6 ք/մ մակերեսով բնակելի տուն, որի օրինականացումը կկատարվի հետագայում՝ օրենքով սահմանված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 10 հունիսի 2025 թվականի N 0612-Ա որոշումը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0839-Ա

## ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Անդրանիկ Վազգենի Սաֆարյանի 08/08/2025 թվականի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Անդրանիկ Վազգենի Սաֆարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի հարկի հարկային պարտավորությունները վճարելուց և ժառանգության գործընթացի ավարտից հետո առաջացած՝ Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0031-0018 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի և բնակելի տան՝ 983 (ինը հարյուր ութսուներեք) դրամ գերավճարը, 06-070-0080-0012 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի՝ 3552 (երեք հազար հինգ հարյուր հիսուներկու) դրամ գերավճարը և 06-070-0354-0085 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական հողամասի՝ 641 (վեց հարյուր քառասունմեկ) դրամ գերավճարը հաշվանցել և մարել Անդրանիկ Վազգենի Սաֆարյանի անվամբ անհատական սեփականության իրավունքով գրանցված Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0031-0018, 06-070-0080-0012 և 06-070-0354-0085 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի 2025թ . -ի հարկային պարտավորությունները:

2. Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ տասնօրյա ժամկետում իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 օգոստոսի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0840-Ա

## ԱՆՆԱ ԱՐԹՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Աննա Հարությունյանի 12.08.2025 թվականի դիմումը. ***որոշում եմ***

1.Աննա Արթուրի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրում հաշվառված ՏՈՅՈՏԱ ՌԱՎ 4 2. 4 (**TOYOTA RAV 4 2.4**) մակնիշի **73AA770** պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի գերավճարը՝ 7932 (յոթ հազար ինը հարյուր երեսուներկու) դրամը (հաշվեհամար 900235403111) հաշվանցել Աննա Արթուրի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրում հաշվառված ՄԱԶԴԱ CX-5 2.5 (**MAZDA CX-5 2.5**) մակնիշի **70HA770** պետհամարանիշով մեքենայի գույքահարկի հաշվին (հաշվեհամար 900235403111):

2.Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետին՝ իրականացնել գերավճարի հաշվանցման աշխատանքները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0841-Ա

## ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ, 64-րդ, 97-րդ հոդվածներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, քանի որ 2010 թվականին ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի

հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024GUK3UN (29.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը և հաշվի առնելով Սահակ Բադալի Դաշյանի (ծնված՝ 11.06.1957 թ.) դիմումը. ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի Փամբակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 06-107-0410-0001 ծածկագրով 0,05138հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանանակության:

2. 06-107-0410-0001 ծածկագրով 0,05138հա ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, 1-ին փողոց, 39 քոթեջ փոստային հասցե:

3. Ճանաչել Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը, Սահակ Բադալի Դաշյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, 1-ին փողոց, 39 քոթեջ հասցեում գտնվող 06-107-0410-0001 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,05138 հա հողամասի և հողամասի վրա ինքնակամ կառուցված ընդհանուր 64.20 քմ մակերեսով քոթեջի, 9,10 քմ մակերեսով և 13քմ մակերեսով պարիսպների նկատմամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

4.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնքի սեփականություն ճանաչված՝ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված, Սահակ Բադալի Դաշյանի կողմից պետական սեփականություն հանդիսացող Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, 1-ին փողոց, 39 քոթեջ հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2010թ-ին ինքնակամ կառուցված ընդհանուր 64.20 քմ մակերեսով քոթեջը, 9,10քմ մակերեսով և 13.00 քմ մակերեսով պարիսպները:

5. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե, Հայաստանի Հանրապետության անվամբ պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

13 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0842-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-015-0001-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Անտառամուտ, 2 հողամաս փոստային հասցե:
2. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-015-0001-0014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Անտառամուտ, 3 հողամաս փոստային հասցե:
3. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-015-0009-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Անտառամուտ, 1-ին փողոց, 13 բնակելի տուն փոստային հասցե:
4. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

13 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0843-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0057-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 9-րդ փողոց, 3/3 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

14 օգոստոսի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0844-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-041-0106-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Լեռնապատ, 10-րդ փողոց, 2/7 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

14 օգոստոսի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0845-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 0536-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 02 հունիսի 2016 թվականի թիվ 631-Ն որոշմամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության գործող հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Անանյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ռաիսա Մինասյան-աշխատակազմի քարտուղար,
Քարտուղար՝ Լիլիթ Անդրիասյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ, սոցիալական աշխատող,
Անդամներ՝ Նարեկ Ժամհարյան-Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, սոցիալական աշխատող,
Գայանե Բայադյան-աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Շուշանիկ Հակոբյան- Փամբակի բուժ. ամբուլատորիայի բուժքույր, ավագանու անդամ,
Արթուր Ծատուրյան-Բազում բնակավայրի վարչական ղեկավար,
Հակոբ Փափազյան- ՀՀ ՆԳՆ ՈԼՄՎ Գուգարքի բաժնի ԱԳ և ԸԲԿ խմբի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ,
Անի Թումանյան- ՄՍԾ Վանաձորի տ/կ-ի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի ավագ սոցիալական աշխատող:

2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ղեկավարի 05 մայիսի 2025 թվականի թիվ 0536-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

14 օգոստոսի 2025, գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0846-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0019-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, 8 հողամաս փոստային հասցե:

2.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0020-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, 9 բնակելի տուն փոստային հասցե:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

14 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0847-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Կարապետ Իվանի Գրիգորյանի (ծնված՝ 21.01. 1959 թ) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N-2 որոշումից քաղվածքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղում գտնվող 06-070-0285-0039 կադաստրային ծածկագրով 0,193547 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շենք շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Կարապետ Իվանի Գրիգորյանի (ծնված՝ 21.01.1959 թ), Անահիտ Ռազմիկի Ղազարյանի (ծնված՝ 09.06.1968թ.), Նվարդ Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 20 . 05 . 1957թ . ), Իվան Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 29.03.1988թ.) և Տաթևիկ Կարապետի Գրիգորյանի (ծնված՝ 16.04.1989թ.,) սեփականության իրավունքը 06-070-0289-0039 կադաստրային ծածկագրով 0,19 հա և հատկացվածից ավել 0,003547 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

14 օգոստոսի 2025, գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0848-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Սոնյա Էմինի Բոջուկյանի (ծնված՝ 30.06. 1959թ.) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ N-2 որոշումից քաղվածքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղում գտնվող 06-070-0325-0014 կադաստրային ծածկագրով 0.25084 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շենք շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Սոնյա Էմինի Բոջուկյանի (ծնված՝ 30.06. 1959թ) սեփականության իրավունքը 06-070-0325-0014 կադաստրային ծածկագրով 0.25 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի և հատկացվածից ավել 0,00084 հա հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

14 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0849-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Լևոն Ալբերտի Վարդումյանի (ծնված՝ 27.10.1970թ.) լիազորված անձ Տիգրան Սերյոժայի Ապրեսյանի (ծնված՝ 01.09.1961թ.) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, 14.08. 2025թ-ին տրված Վահագնի գյուղի տնտեսական թիվ 5 գրքի գրանցման համար 100 հաշվի ճշտված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության վկայագրերը՝ գրանցամատյան 4661, 4662 այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Օրենքի ուժով ճանաչել Լևոն Ալբերտի Վարդումյանի (ծնված՝ 27.10.1970թ.) սեփականության իրավունքը 06-103-0022-0014 կադաստրային ծածկագրով 0,074հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հատկացվածից ավել 0,00053 հա հողամասի նկատմամբ (ընդհանուր 0,07453հա):

2. Հողամասի վրա առկա է 1923թ-ին կառուցված՝ ընդհանուր 46,34ք/մ մակերեսով կիսակառույց:

3. Ուժը կորցրած ճանաչել Վահագնի համայնքի ղեկավարի 02 հոկտեմբերի 2013 թվականի N 30 որոշումը, ինչպես նաև կադաստրային գործում առկա՝ նախկինում տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումից բոլոր քաղվածքները և 06-103-0022-0014 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում հիմք ընդունել 14.08.2025թ-ին տրված ճշտված քաղվածքը:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

14 օգոստոսի 2025, գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0850-Ա

## ԷԼՏՈՆ ՄԿՐՏՉԻ ԳՈԳՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, Էլտոն Մկրտչի Գոգչյանի (ծնված 04.06.1959թ.) դիմումը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, Էլտոն Մկրտչի Գոգչյանի սեփականություն հանդիսացող, 06-070-0344-0002 ծածկագրով 0.292857 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք հանդիսացող հողամասը փոխադրել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասի:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Էլտոն Մկրտչի Գոգչյանին պարտավորեցնել համայնքի բյուջե (հողի օտարումից եկամուտներ հաշվեհամար՝ 900235422137) վճարել 2268910 ՀՀ դրամ (երկու միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր տաս դրամ):

3.Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0344-0002 ծածկագրով 0.292857 հա հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված գործառնական

նշանակության հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 20 հողամաս փոստային հասցե:

4.Սույն որոշման 3-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

15 օգոստոսի 2025

գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0851-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-107-0204-0001,0002 կադաստրային ծածկագրերից անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, 6-րդ փողոց, 55 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0852-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-070-0600-0001 կադաստրային ծածկագրերից անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ , Մարգահովիտ, 22-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 17 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0853-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի Վահագնի գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0120-0128 ծածկագրից 0,15384 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասը և 06-103-0120-0131 ծածկագրից 0,17685 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը (ընդհանուր 0,33069 հա) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասի:

2. 06-103-0120-0128,0131ծածկագրով հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Վահագնի 13 հողամաս փոստային հասցե:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0854-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդված 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0003-0001 կադաստրային ծածկագրից 0,078 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Ճանաչել Փամբակ համայնքի սեփականության իրավունքը 06-023-0003-0001 կադաստրային ծածկագրից 0,078 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:
3. Սույն որոշման 1-ին կետով նշված հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 12/1 հողամաս փոստային հասցե:
4. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0855-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-015-0032-0001 կադաստրային ծածկագրերից անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Անտառամուտ, 4-րդ փողոց, 20 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0856-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Սևակ Սանդրոյի Գևորգյանի (ծնված՝ 15.08. 1978թ . ) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17 . 02 . 1991թ-ի N-2 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. ***որոշում եմ***

1. Հաստատել Փամբակ համայնքի Անտառամուտ հասցեում գտնվող 06-015-0112-0050 կադաստրային ծածկագրով 0,28829 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2 . Օրենքի ուժով ճանաչել Սևակ Սանդրոյի Գևորգյանի (ծնված՝ 15 . 08 . 1978թ) սեփականության իրավունքը 06-015-0112-0050 կադաստրային ծածկագրով 0,28 հա և հատկացվածից ավել 0,00829 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0857-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 03072025-06-0004 վկայականը, սեփականատեր՝ Արեն Սամվելի Սարդարյանի (ծնված՝ 15.07.1976թ.) դիմումը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը. ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արեն Սամվելի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (վկայական N 23052025-06-0067) 06-023-0037-0012 կադաստրային ծածկագրով 0,4043 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ համաձայն <<Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված տարանջատման հատակագծի, տարանջատել չորս գույքային միավորների՝

ա. 0,051806 հա մակերեսով հողամասի և վերջինիս վրա կառուցված բնակելի տան:
բ. 0,052002 հա մակերեսով հողամասի և վերջինիս վրա կառուցված բնակելի տան:
գ. 0,050006 հա մակերեսով հողամասի և վերջինիս վրա կառուցված բնակելի տան:
դ. 0,250494 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. ա. 06-023-0037-0012 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,051806 հա մակերեսով հողամասին և վերջինիս վրա կառուցված բնակելի տանը տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 8-րդ փողոց, 42 բնակելի տուն փոստային հասցե:

բ.06-023-0037-0012 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,052002 հա մակերեսով հողամասին և վերջինիս վրա կառուցված բնակելի տանը տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 8-րդ փողոց, 42/2 բնակելի տուն փոստային հասցե:

գ.0,050006 հա մակերեսով հողամասին և վերջինիս վրա կառուցված բնակելի տանը տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 8-րդ փողոց, 42/3 բնակելի տուն փոստային հասցե:

դ.0,250494 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 8-րդ փողոց, 42/4հողամաս փոստային հասցե :

3.Սույն որոշմամբ տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0858-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Էմին Հմայակի Գրիգորյանի (ծնված՝ 04.07. 1953թ . ) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02 . 05 . 1991թ-ի N-2 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. որոշում եմ

1. Հաստատել Փամբակ համայնքի Բազում հասցեում գտնվող 06-023-0025-0003 կադաստրային ծածկագրով 0,08869 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա) Օրենքի ուժով ճանաչել Էմին Հմայակի Գրիգորյանի (ծնված՝ 04.07.1953թ.), Էվելինա Գեորգիի Իշխանյանի (ծնված՝ 19.02.1962թ.), Կարինե Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 03.01.1983 թ.), Քրիստինե Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 22.01.1984թ.) և Համլետ Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 20.06.1986թ,) սեփականության իրավունքը 06-023-0025-0003 կադաստրային ծածկագրով 0,08 հա և հատկացվածից ավել 0,00869 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Հաստատել Փամբակ համայնքի Բազում հասցեում գտնվող 06-023-0213-0006 կադաստրային ծածկագրով 0,24953 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

բ). Օրենքի ուժով ճանաչել Էմին Հմայակի Գրիգորյանի (ծնված՝ 04.07.1953թ.), Էվելինա Գեորգիի Իշխանյանի (ծնված՝ 19.02.1962թ,), Կարինե Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 03.01.1983 թ.), Քրիստինե Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 22.01.1984թ.) և Համլետ Էմինի Գրիգորյանի (ծնված՝ 20.06.1986թ,) սեփականության իրավունքը 06-023-0213-0006 կադաստրային ծածկագրով 0,24 հա և հատկացվածից ավել 0,00953 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

15 օգոստոսի 2025
գ. Փամբակ